Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԷՌ–ԶԵ[1]

Զուր չէ, որ, երբ ցանկություն եք հայտնում ծանոթանալ Թիֆլիսի գործարանների հետ՝ ձեզ ուղարկում են «հիա՛րկե «Էռ-Զե»— «վագոնների, շոգեմեքենաների նորոգման գործարանը»:

Անդրկովկասի արենատար անոթների, երակների գործարանը:

Այնտեղ են ուղարկվում բոլոր հիվանդ ու վիրավոր շոգեմեքենաներն ու վագոնները բուժվելու:

Տրանսպորտի այժմեական արտակարգ նշանակությունը, երկրի տնտեսական, տեխնիկական, կուլտուրական և առհասարակ բովանդակ կենսական կապի վերաբերյալ միանգամայն հասկանալի կդարձնի այն արտակարգ ուշադրությունը, որ ուղղված է դեպի «Էռ-Զեն»:

Ահագին տարածության վրա փռել է այդ մետաղե «բժիշկը» իր ամբուլատորիան, իր բոլոր խիրուրգիական, օրթոպեդիական բաժիններով:

Մի քանի հազար բանվորներ և բանվորուհիներ (վերջինները բավական քիչ, որ գործարանի աչքի ընկնող բացն է: Մանավանդ աչքի է ընկնում «Մարտի 8-ի» օրը), ահագին տեխպերսոնալ, վարչություն և գործարանի հետ կապված բազմաթիվ կազմակերպություններ ու այլ մարդիկ— այս ամենն «Էռ-Զեն» դարձնում են մի ավան՝ իր բնակչությամբ, տնտեսությամբ և վարչությամբ:

Խորհրդային իշխանության օրոք հսկայական չափերով աճել են մատերիալ-տեխնիկական և կուլտուր-քաղաքական պայմանները և սրանց հիման վրա արդյունաբերությունն այնպիսի թռիչք էկարող էր և զուտ մասնագետն ուղարկվել, ապա դրա հետ միասին պահանջ է դրվում գրողի պոլիտեխնիզացիայի խնդիրը:

Սրա հանդեպ գործարանն էլ պետք է լավ հիմունքների վրա դնի հրապարակման ենթակա տեղեկանքների և բացատրությունների գործը:

Տեղեկանքներ ստանալը, մարդուն գտնելը, ստուգելը… հեշտ բան չէ «Էռ-Զեի» պես մեծ գործարանում: Պետք է սիստեմ մշակվի, կազմակերպվի հատուկ ապարատ:

Կան, որ ծուլանում են, իսկ մեծ մասն ուղղակի վայրկյան չունի:

Մինչդեռ որքա՜ն կարևոր է հասարակական ինֆորմացիան լայն, բազմակողմանի:

Ցեխերի մեծ ու փոքր կորպուսների մեջ տաքացած, կատաղի կռիվ է նյութի դեմ:

Ծանր մուրճերի դղրդյունը, մեքենաների շռինդը, հնոցների հռնդյունը, բանվորների կարճ ու կտրուկ գոռոցները միախառնված ներդաշնակում են իսկական աշխատանքի սիմֆոնիա:

Բանվորների դեմքը կենտրոնացած է, լարված, անգամ՝ դաժան: Հեշտ չէ տրվում նյութը,— աշխատանքը ծանր է և պահանջում է ուժգին գրոհ: Եվ բանվորները տարվում են այդ գրոհով՝ ուղղակի ռազմական իմաստով:

Սա արդեն ֆրոնտ է. կրակի գիծը: Եվ ֆրոնտայինին պետք է հասկանալ: Նրա խոսքը պայքարողի և կուրծքը թշնամուն ուղղած մարդու խոսք է: Թշնամո՛ւն-քանի՛ տեղ է նա այժմ…

Ձուլման ցեխ: Սև, հատուկ ավազի վրա զանազան կաղապարների մեջ ֆորմեր են սարքում: Բանվորները պպզած, կռացած սարքում են ֆորմերը, բերում, կրկին լցնում: Դժվար աշխատանք է ավազի հետ «խաղալը»: Սա երեխաների խաղը չէ: Ամեն մի դուրս ընկած, ներս ընկած կող ու փոս ահագին նշանակություն ունի: Նրանք լարված դիտում են ավազե կաղապարները, ստուգում, քերում, կրկին ծեփում: Լուռ են: Հազիվ-հազ մռմռում են կողքինի հետ կամ ձայն տալիս մեկին մյուսին: Բայց աչքը շարունակ իր «բարելեֆի» վրա՝ ինչպես արձանագործ…

կատարում, որ այդ աճումն Անդրկովկասում տոկոսական հարաբերությամբ նշանակալից չափով գերազանցում է ամբողջ Խորհրդային Միության աճման միջին տոկոսից:

Եվ Անդրկովկասի քաղաքները և այդ վայրերն այժմ ծածկվում են նորանոր գործարանների և այլ ձեռնարկների ցանցով:

Բնական հարստությունների օգտագործումը, արտասահմանից տեխնիկական անկախության համար մղվող հաջող պայքարը և դրա հետ կապված մասշտաբների և տեմպերի արագացումը, դրա անմիջական էֆեկտը—անդեզիտը, գուլոծլինը, հրակայուն կավը, նավթը, հեղուկ ու պինդ վառելանյութը, Արթիկ-տուֆը և այլն— այս ամենը տրանսպորտի առջև դնում են առաջնակարգ և գերագույն նշանակություն ունեցող խնդիրներ:

Ահա թե ինչո՞ւ, երբ մազութոտ ու ցեխոտ սանդուխներից իջնում ես «Էռ-Զեի» բակը՝ շենքը չի երևում այլևս «հսկայական»…

Այո, «Էռ-Զեն» անցնող էտապ է:

Գրասենյակները, վարչությունները… Նրանք պաշարված են ուղղակի թղթակիցներով ու բրիգադաներով: Հասարակական, լայն, կենդանի ուշադրությունը, նրա սերտ կապը արդյունաբերության հետ ամեն օր, ամեն ժամ գործարանն են լցնում տեմպերին և նվաճումներին հետևող մարդկանցով: Սրանք ուղղակի հարցապնդում են վարչության, տեխպերսոնալին:

Եվ վարչության ու մյուսների համար ուղղակի դժվար կացություն է ստեղծվում: Պատասխանել ամենքին, պատասխանել սպառիչ կերպով:

Մենք «ընթացքում» փոխվում ենք և փոխում մեր հարցակետերը ևս:

Արդեն անցնում է և անցել է վաղուց «հյուր գնացող» թղթակցի տիպը: Հարցակետերն ավելի ու ավելի են մոտենում արդյունաբերության էության, կենսական խնդիրներին և հետզհետե գիտականանում: Ճշմարիտ որ՝ հիմի օչերկիստը պետք է մասնագիտանա: Օչերկիստի պոլիտեխնիզացիան հերթական հրատապ հարց է: Եվ, եթե կա այն հանգամանքը, որ գրողներին գործուղում են արդյունաբերական վայրերը՝ պատկերավորելու այն, առանց որիԱհա բանվորներից մինը մանղալը վառած ածուխով բերեց դրեց կարճահասակ ու ծեր բանվորի «արձանի» մոտ ու գնաց:

Բանվորը գոռաց և զայրալի վեր թռչելով ոտքը զարկեց մանղալին: Շիկացած ածուխները դիպան դռան ու պատերին: Վրա հասան մի քանի հոգի և սկսեցին հանգստացնել ծերուկին: Բայց սա շիկացած ու դողահար գրեթե գոռում էր.

— Ախր ո՞նց կարելի է կաղապարին դիպչել: Խա՛մ է, չի՞ իմանում… Սա մանղալ դնելու տե՞ղ է: Ախր դա անելու՞ բան է,— հարցնում է կրկին ու զայրանում ավելի:

Այդպես է, ձուլողները նյարդային են, արձանագործների պես, չեն կարող ներել, որ մեկը դիպչի կաղապարին

Բայց ծերուկը նկատեց նաև շիկացած ածուխները, որ կարող էին փայտեղեն մասերին կպչել և այրել: Սկսեց ոտքով հավաքել ու շարունակել գոռալը:

— Շատ մի՛ բարկանաք, պապաշա, կծերանաք:

— Ախր ինչպե՞ս կարելի է… շարունակում է զարմանալ բանվորը:

Մյուսը՝ կողքին՝ երիտասարդ բանվոր, առանձին խնամքով, տարված կռացել էր «բարելեֆին»: Քրտինքը ծորում է կերտվածքի վրա: Նա անհանգիստ շնչում է, վեր կենում, նայում, փնտրում, շուռ ու մուռ անում շուրջը: Եվ կռանում է քանի անգամ: Եվ ֆիզիկական և ներքին լարվածությունը զգուշավորության պահանջի հետ աշխատանքը դարձրել է պատասխանատու:

— Նո՛ւ, ինչպե՞ս է, ընկեր, ձեր գործը:

— Աշխատում ենք, մեզ չենք խնայում: Գործ է, պիտի արվի…

— Ինչպե՞ս է սոցմրցումը, հարվածայնությունը:

— Ռոստովի և Միության բոլոր «Էռ-Զե»-ների հետ սոցմրցման ենք դուրս եկել:

— Հաղթո՞ւմ եք:

— Իհարկե:

— Բայց ձեր ու նրանց պայմանները նո՞ւյնն են:

— Պայմանը ո՞րն է: Անում ենք ու տակից դուրս ենք գալիս:

Խոսում է լուրջ, գործնական եղանակով և քրտնամխած դեմքը դարձնելով ինձ նայում է ոգևորված ու հոգնած աչքերով:

Խոսում է, ժպտում և սիրով նայում իր կաղապարին: Նայում ես շուրջդ: Իսկապես որ չեն խնայում իրենց: Եվ այստեղ է, որ ամենից ավելի հասկանալի է ֆրոնտի «նեղ տեղերն» ու նրանց նշանակությունը մարտիկ-ֆրոնտային բանվորի համար:

Հեռանում եմ նրանից դեպի ուրիշները:

Դարբնոցը լսելի էր դեռ հեռվից: Այժմ, երբ մտնում ես շենքը՝ ականջներդ խլանում է: Խոսում են իրար հետ, գոռում, ձայն տալիս իրար բանվորները, բայց ոչինչ չես հասկանում: Իսկ իրենք գիտեն այդ անհասկանալի լեզուն: Պրոֆեսիոնալ ականջով լսում են իրար:

Այ թե որտե՞ղ է դղորդն ու շռինդը: Մուրճերն այնպիսի դոփով են հարվածում համառ ու կարծր մետաղին, հնոցների բոցերն այնպես են կակղացնում նրանց, մեքենաները ձևավորում, որ զգում ես բնության և նյութի ենթարկումը մարդկային կամքին:

Այստեղ արդեն իսկական ըմբշամարտ է մետաղի հետ: Ձեռնամերձ կռիվ: Բանվորները մեքենաների ու ձեռքի մուրճերի տակ իսկապես որ ծեծ են տալիս մետաղին և սանձահարում նրան:

Եվ իսկ որ չեն խնայում իրենց բանվորները: Նրանք բանում են կրակի պես— իրեց շուրջը բոցավառվող կրակի:

Բայց այսքան «տարերային» թվացող գործը—հարված, ֆիզիկական թափ— պահանջում են մեծագույն զգուշություն և ճարտարություն շոգեմեքենաների և վագոնների մասերի ճիշտ չափավորման մեջ: Թուջը, պողպատը, երկաթը, փայտ չէ, որ փորես, ծակես, սխալվես կրկին դրստես: Սա մետաղ է—պահանջում է ճշտորոշ չափումն: Ապա թե ոչ մեքենամասը չի հագվի, չի բռնի, չի կպչի և…գնացքը կխորտակվի:

— Պետք է աչքը չորս արած չափել: Ամեն մի չնչին կետը մեծ հետևանք է տալիս,— ասում է երիտասարդ բանվորը և ուշի ուշով զննում է մեքենամասը, հետո մյուսը, և այսպես միալար:

— Պատասխանատու գործ է: Սա ասել է՝ տրանսպորտ… Հանաք բան չէ, երկիրը մեզ է նայում:

Բանվորների հետ զրույցն ահա այսպիսի բնույթ ունի: Նրանք երկրի քաղաքական, պետական հարցերը միացնում են անմիջական մեքենայի և նրա մասերի հարցերի հետ:

Նա չի խոսում— նա կառուցում է և խոսում: Նրա խոսքը վճռական նշանակություն ունի: Եվ դրա համար էլ իրերի ընթացքը չափում ես նրա խոսքի համաձայն:

Այո, այստեղ լավ է, քաղաքի մեշչանական, կիսամեշչանական և ուրիշ բազմաթիվ խավերի շոգիներից հետո, որ երբեմն ակամա շնչում ես այնտեղ կենցաղի մեջ:

Ահա և ներկարարը: Երկաթգծի նկարիչը: Խառնում է ներկը և սկեպտիկ նայում ամանի մեջ:

— Ի՞նչ է, դուրս չի՞ գալիս:

— Կապույտ եմ ուզում, լավ չի դուրս գալիս,— կծկում է աջ այտը բանվորը:

— Է,— թող քիչ էլ բաց լինի:

— Ստի՛լ ունի, ախր, էս զարհումարը: Մենք էլ ենք նկարիչ, չորտ վազմի:

Կոկ և մաքուր ճաշարան ունի գործարանը: Դիմազրկությունը վերացված է. ամեն բանվոր իր տեղն ունի, իր սեղանն ու ամանեղենը: Տալիս են համեղ, մաքուր ճաշ: Երբեմն «նեղ տեղերով» է անցնում այդ ճաշը, որի մեջ մեղավոր է կոոպերացիան և տրանսպորտը,— ասում է գործարիկոմը մի այնպիսի միմիկայով, որ ուզում է ասել.

— Դե հասկանում եք էլի… Հուփ ենք տալիս զանազան ինստանցիաներ…

— Հասկանում եմ, բայց պետք է վերջ տալ հասկանալուն:

Դե, իհարկե:

Գործարանն ունի մի քանի հազար բանվոր և, ինչպես ասի վերևում, փոքրաթիվ բանվորուհիներ՝ մոտ 325:

— Բոլորը հարվածային են և սոցմրցման մեջ են:

— Պրոգրեսիվ գործա՞րքը:

— Ռեֆորմներ կան, էֆեկտ տալիս է, համարյա պրոգրեսիվ գործարք է, բայց դեռ նոր է, ծավալում ենք:

— Տնտհաշվա՞րկը:

— 150 բրիգադ մինչև մարտի մեկը: Շուտով կդառնա 300: Բանվորների որակավորո՞ւմը, կադրերի պատրաստո՞ւմը: Մինչև այժմ 5,5 տոկոս: 32-ին պետք է աճի նշանակալից չափով:Տեխնիկայի տիրապետության հարցն է այժմ դրված— աշխատում ենք այդ գծով, դեռ նվաճումներ չկա պահանջած չափով. խմբակներ միայն: Կադրերի բաժնում կան պլաններ: Ուսանողներ ունենք արդեն:

— Լավ, ի՞նչ եք մտածում գործարանի ռեկոնստրուկցիայի մասին:

Այս գործարանը չի կարող բավարարել աճող արդյունաբերության պահանջներին:

— Հա,— կենդանանում է գործարիկոմը,— արդեն վերջացած են նախնական պատրաստությունները և շուտով հիմք կդրվի նոր գործարանի: Լայն ու խոշոր ձեռնարկը դառնալու է ամբողջ Անդրկովկասի պարծանքը: Շուտով էլեկտրատարների նորոգման գործին կձեռնարկենք: Ցեխը պատրաստ է, կադրերն ապահոված:

— Իսկ Անդրկովկասյան ֆեդերացիայի տասնամյակի՞ն[2]:

— Բացվում է կենտրոնական քիմիական լաբորատորիա: Պատրաստ է արդեն: Մարտի 12-ին…

Գործարանը պատրաստվում է մեծ շուքով տոնել տասնամյակը: Նա այդ օրը պլանից դուրս նվիրելու է 2 շոգեմեքենա: (Իհարկե ոչ խորտակողների համար… այլ բոլոր նվիրված բանվորության):

Գործարանն այս տարի անցյալ տարվա պլանների համեմատ տալիս է գերազանց կատարումն առաջադրանքների, անցյալ տարին՝ ավելի, քան նախանցյալը: Թվերը՝ ուրիշ առիթով:

Եվ զուր չէ, որ «հաղթել է» Ռոստովի նույնանուն գործարանին:

Դա «ուրախալի» է: Եվ պետք է ուրախանալ: Այդ թույլ է տալիս սոցմրցման էթիկան…

ԷՌ—ՁԵ

(Էջ 123)

Առաջին անգամ տպագրվել է ԽՀ, 1932, N64: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է նույնից:

1 Էռ—Ձե—վագոնների, շոգեմեքենաների նորոգման գործարան—ռուսերեն ремонтный завод բառերի հապավումով կոչվել է Էռ-Ձե:

2 Անդրկովկասյան ֆեդերացիան հիմնադրվել է 1922 թ. մարտի 12-ին Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կենտրոնական գործադիր կոմիտեների՝ Թիֆլիսում կայացած լիազոր-կոնֆերանսի որոշմամբ: